ՃԱՆԱՉԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Յոթերորդ հաղորդում

Ճանաչել համբարձումը

Գրվածքների ընթերցում. Գործ 2:36, Եբր 2:9, 4:14-15, 7:26, 12:2, Եփս 1:19-23, 2:6

I. **Փրկիչ-Մարդու համբարձումն այն է, որ Նա ստեղծագործության, մարմնացման, մարդկային ապրելակերպի, խաչելության և հարության գործընթացի միջոցով որպես Աստված ու մարդ, որպես Արարիչ ու արարած և որպես Փրկագնիչ, Փրկիչ ու կենդանարար Հոգի հանդիսավոր կերպով նշանակվեց Իր երկնային պաշտոնին, որպեսզի ի կատար ածի Աստծու կառավարումը և իրագործի Աստծու նորկտակարանյան տնտեսությունը:**

II. **Մենք պետք է տեսնենք Տիրոջ համբարձման օբյեկտիվ տեսանկյունը.**

Ա. Տիրոջ համբարձումը Նրան փառքով ու պատվով պսակեց՝ Եբր 2:9.

1. Փառքը Հիսուսի անձին վերաբերող շքեղությունն է. պատիվը Նրա արժանավորությանը վերաբերող թանկարժեքությունն է՝ Ա Պտ 2:7:
2. Քրիստոսը փառավոր է Իր վիճակով և պատվավոր՝ Իր դիրքով. Նա բոլոր թագավորներից ու կառավարիչներից վեր է. սա Նրա պատիվն է:

Բ. Տիրոջ համբարձումը Նրան Աստծու կառավարման համար գահակալել տվեց. Եբր 12:2-ն ասում է, որ Քրիստոսն այժմ նստած է Աստծու գահի աջ կողմում.

1. Այն փաստը, որ Աստված Քրիստոսի մեջ նստած է գահին, նշանակում է, որ Աստված Քրիստոսի ներսից ու Քրիստոսի միջոցով ղեկավարում է ողջ տիեզերքը, ճիշտ ինչպես լույսն է ճրագի ներսից և ճրագի միջոցով շողում՝ Հյտ 22:1, 3, հմմտ 21:23:
2. Քրիստոսն այժմ գահի վրա է, որպեսզի ղեկավարի ողջ տիեզերքը. Նա եզակի Ղեկավարն է, թագավորների Թագավորը և տերերի Տերը. Նա երկրի թագավորների Կառավարիչն է՝ 1:5, 17:14, 19:16:
3. Նրա կառավարումը կապված է տիեզերքի հետ, բայց Նրա՝ Աստծու նորկտակարանյան տնտեսությունն իրագործելն Իրեն տարածելու համար է, որպեսզի Իրեն վերարտադրի՝ եկեղեցին՝ Իր Մարմինը կառուցելու նպատակով, որի արդյունքը կլինի Նոր Երուսաղեմը՝ հմմտ Գրծ 5:31:

Գ. «Իսրայելի ողջ տունը թող հաստատ գիտենա, որ Աստված Նրան և՛ Տեր, և՛ Քրիստոս է դարձրել՝ այս Հիսուսին, ում դուք խաչեցիք» (2:36). այս խոսքում «դարձրել» բառը կարելի է հասկանալ «հանդիսավոր կերպով պաշտոնի նշանակել». Աստված Քրիստոսին Նրա համբարձման մեջ հանդիսավոր կերպով նշանակեց Նրա երկնային սպասավորության պաշտոնին.

1. Փրկիչ-Մարդն Իր համբարձման մեջ դարձվեց Տերը և տիրեց ամեն բանի. Նա հիմա Տերն է և տիրում է ողջ տիեզերքին, Աստծու ընտրյալ ժողովրդին ու բոլոր դրական բաներին, իրողություններին և անձանց:

2. Փրկիչ-Մարդն Իր համբարձման մեջ դարձվեց Քրիստոսը՝ որպես Աստծու Օծյալը (Եբր 1:9)՝ իրագործելու Աստծու հանձնարարությունը:

Դ. Մենք այժմ Քրիստոսի հետ մեկ ենք Նրա հարության և համբարձման մեջ (Եփս 2:6). դրա արդյունքում մենք հարության մեջ կյանք և զորություն ունենք, ինչպես նաև իշխանություն՝ համբարձման մեջ. մեր Տիրոջ հետ շփվելիս մենք պետք է գիտակցենք, թե ինչ է Նա, այսինքն՝ գիտակցենք Նրա կարգավիճակը, դիրքն ու պաշտոնը:

III. Մենք պետք է տեսնենք Տիրոջ համբարձման սուբյեկտիվ տեսանկյունը՝ հմմտ Սղմ 91:1, Երգ 4:7-8, 6:10.

Ա. Քրիստոսն Իր ամեն ինչ գերազանցող համբարձման մեջ վերև բարձրացվեց դժոխքից (որտեղ մեռած մարդիկ են պահվում), երկրից (որտեղ ընկած մարդիկ են շարժվում Աստծու դեմ), օդից (որտեղ Սատանան ու նրա խավարի զորությունն են գործում Աստծու դեմ), և բոլոր երկինքներից (ուր Սատանան կարող է գնալ)՝ Եփս 1:20-21, 4:8-10, Եբր 7:26, Հոբ 1:6-12ա, 2:1-6:

Բ. Քրիստոսն Իր համբարձման մեջ անցավ երկինքները (Եբր 4:14), այնպես որ այժմ Նա ոչ միայն երկնքում է (9:24), այլև երկինքներից ավելի բարձր է (7:26), բոլոր երկինքներից շատ ավելի վեր (Եփս 4:10):

Գ. Եփս 1:19-23-ը բացահայտում է, որ համբարձված Քրիստոսից մեզ փոխանցում է կատարվում. 22-րդ խոսքն ասում է, որ Աստված Քրիստոսին «ամեն բանի վրա Գլուխ լինել տվեց եկեղեցու համար». «եկեղեցու համար» արտահայտությունը մատնանշում է համբարձված Քրիստոսից եկեղեցուն՝ Նրա Մարմնին, կատարվող փոխանցումը.

1. Աստված համբարձված Քրիստոսին մեծ շնորհ տվեց՝ լինել Գլուխ ամեն բանի վրա. այն, ինչ Աստված տվել է Քրիստոսին, եկեղեցու համար է. դա փոխանցվում է եկեղեցուն, և եկեղեցին կիսում է դա:
2. 20-22-րդ խոսքերը ցույց են տալիս, որ Աստված Իր զորությունը գործադրեց Քրիստոսի մեջ չորս քայլով. նախ՝ մեռելներից Նրան հարուցանեց. երկրորդ՝ երկնային ոլորտներում Իր աջ կողմը նստեցրեց. երրորդ՝ ամեն բան ենթարկեց Նրա ոտքերի տակ. և չորրորդ՝ Նրան ամեն բանի վրա Գլուխ լինել տվեց եկեղեցու համար:

Դ. Քրիստոսն Իր համբարձման մեջ դարձվեց եկեղեցու՝ Իր Մարմնի Գլուխը, Աստծուն Իր լեցունությամբ արտահայտելու համար՝ Կող 1:18, Եփս 1:23, 3:19.

1. Գլուխն ու Մարմինը մեկ են և տիեզերական մարդ են կազմում. այս աստվածային հարցում չկա ո՛չ տարածության տարրը, ո՛չ ժամանակի. Մարմինը մեկ է Գլխի հետ աստվածային կյանքում և աստվածային Հոգու մեջ:
2. Ըստ աստվածային տեսակետի՝ մենք մեկ ենք համբարձված Քրիստոսի հետ, և Նրա համբարձումը նաև մերն է (2:6). այստեղ՝ այս համբարձման մեջ, մենք արտահայտում ենք Նրան Իր լեցունութ-

յամբ. քանի որ գերազանցող Քրիստոսը Եռամեկ Աստծու մարմնավորումն է (Կող 2:9), Նրա գերազանցող փոխանցումը ներառում է Եռամեկ Աստծու ողջ հարուստ բաշխումը, որպեսզի մեզ Իր արտահայտության համար դարձնի Քրիստոսի լեցունությունը (Եփս 1:22-23, 3:19, 8):

Ե. Քրիստոսն Իր համբարձման մեջ նաև երկինքներում եղող Քահանայապետը դարձվեց, որպեսզի մեզ բերի Աստծու ներկայության մեջ և հոգ տանի մեր բոլոր կարիքների համար. Նա Իր համբարձման մեջ հանդիսավոր կերպով նշանակվեց Իր քահանայական պաշտոնին՝ Եբր 2:17-18, 4:14-15, Սղմ 110:1-4, Եբր 5:6, 7:26.

1. Մի կողմից՝ Քրիստոսը Քահանայապետն է, ով եկեղեցիների համար բարեխոսում է երկինքներում (խխ. 25-26, Հռմ 8:34). մյուս կողմից՝ Նա Քահանայապետն է, ով շարժվում է եկեղեցիներում և հոգ տանում դրանց համար. Հյտ 1:13-ում Քրիստոսը պատկերված է որպես Քահանայապետ, ինչը երևում է Նրա հանդերձից, մինչև ոտնաթաթերն հասնող հանդերձից, որը քահանայական պատմուճան է (Ելց 28:33-35):
2. Հյտ 8-րդ գլխում Քրիստոսը բացահայտվում է որպես այն Քահանան, ով ոսկե զոհասեղանի մոտ խունկ է մատուցում. «Մեկ ուրիշ Հրեշտակ եկավ ու զոհասեղանի մոտ կանգնեց՝ ոսկե խնկաման ունենալով. և Նրան շատ խունկ տրվեց, որպեսզի բոլոր սրբերի աղոթքների հետ այն մատուցի ոսկե զոհասեղանի վրա, որը գահի առջև է» (խ. 3):

IV. Մենք պետք է տեսնենք, որ մենք Տիրոջ համբարձման մեջ ենք՝ Եփս 2:6.

Ա. Շնորհքի ողջ դարաշրջանը Տիրոջ համբարձման ժամանակն է՝ 1:20:

Բ. Քրիստոսը ոչ միայն համբարձման մեջ է, այլև մեր մեջ՝ Կող 1:27:

Գ. Քրիստոսը դեռ շարժվում է Իր համբարձման մեջ. Նա ապրում, բնակվում, հարակայում, սպասավորում, ծառայում, աշխատում և գործում է Իր համբարձման մեջ.

1. Նա մեր ներսում Իր համբարձման մեջ է. ահա թե ինչու է Պողոսն ասում, որ մենք Քրիստոսի հետ նստեցված ենք Նրա համբարձման մեջ՝ Եփս 2:6:
2. Մեր էության մեջ մի արտասովոր անձ կա՝ համբարձված Քրիստոսը՝ Կող 1:27, Եփս 2:6:
3. Տերն այսօր Իր համբարձման մեջ մեր հոգու մեջ է՝ Բ Տմթ 4:22ա:
4. Այս համբարձման մեջ Եռամեկ Աստված շարժվում է մեր մեջ, և այս շարժումը դառնում է մեր պատմությունը:
5. Քրիստոսը Եռամեկ Աստծու մարմնավորումն է, իսկ մենք Իր համբարձման մեջ այս մարմնավորման մասերն ենք՝ Հռմ 8:10, Բ Կրթ 13:5, Գղտ 2:20, 4:19, Կող 2:9:
6. Ամեն անգամ, երբ հավաքվում ենք Նրա անվան մեջ, Քրիստոսն Իր բոլոր անդամների հետ այնտեղ է համբարձման մեջ, և սա մարդու ներսում Աստծու շարժվելն է՝ Մտթ 18:20, Կող 3:1, 3-4, Եփս 1:20, 2:6:

© 2023 Living Stream Ministry